PRESS RELEASE

PR23/435

ԱՄՀ գործադիր խորհուրդը եզրափակում է IV հոդվածի շրջանակում խորհրդակցությունը և ավարտում Հայաստանի «Պահուստային ծրագրի» երկրորդ ամփոփիչ ստուգումը

Անհապաղ հրապարակման համար

- Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) գործադիր խորհուրդը IV հոդվածի շրջանակում եզրափակեց 2023 թ. խորհրդակցությունը և ավարտեց Հայաստանի «Պահուստային ծրագրի» (SBA) երկրորդ ամփոփիչ ստուգումը: Հայաստանի իշխանությունները շարունակում են «Պահուստային ծրագիրը» դիտարկել որպես կանխարգելիչ:
- 2023 թ. կանխատեսվում է իրական ՀՆԱ-ի 7 տոկոս աճ՝ նախքան աճը կդանդաղի մինչև 5 տոկոս 2024 թ.-ին: Գնաճն արագ նվազեց և կանխատեսվում է, որ մինչև 2024 թ. կեսը կվերադառնա ՀՀ կենտրոնական բանկի 4 տոկոս թիրախին:
- Քաղաքականության հիմնական առաջնահերթությունների թվում են՝ մակրոտնտեսական կայունության պահպանումը, ենթակառուցվածքների և սոցիալական առաջնահերթ ծախսերի ապահովման համար հարկաբյուջետային բուֆերների ստեղծումը, հարկաբյուջետային ռիսկի կառավարումը, դրամավարկային քաղաքականության, մակրոպրուդենցիալ և վերահսկողական դաշտի կատարելագործումը և տնտեսության դիմադրողականության բարձրացումը՝ առաջ մղելով աշխատանքի և ապրանքային շուկաների, ֆինանսների մատչելիության և կառավարման կառուցվածքային բարեփոխումները:

Վաշինգտոն, ԿՇ. Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) գործադիր խորհուրդն ավարտեց Հայաստանի հետ «Պահուստային ծրագրի» (Stand-By Arrangement) երկրորդ ամփոփիչ ստուգումը: Այն երկրի համար հասանելի է դարձնում շուրջ 24.4 միլիոն ԱՄՆ դոլար (18.4 միլիոն ՓՀԻ)՝ ընդհանուր հասանելի գումարը հասցնելով մոտավորապես 73.3 միլիոն ԱՄՆ դոլարի (55.2 միլիոն ՓՀԻ): Հայաստանի իշխանությունները շարունակում են «Պահուստային ծրագիրը» դիտարկել որպես կանխարգելիչ:

Հայաստանը շարունակեց բարձր տեմպով աճել մինչև 2023 թ.: Մասնավոր սպառման և ներդրումների բարձր ցուցանիշների օժանդակությամբ կանխատեսվում է, որ տնտեսությունը 2023 թ. կաճի 7 տոկոսով՝ նախքան աճը կդանդաղի մինչև 5 տոկոս 2024 թ.-ին: Միջնաժամկետ հեռանկարում

700 19th Street NW
Washington, DC 20431
USA

կանխատեսվում է, որ աճը կհասնի իր շուրջ 4.5 տոկոս ներուժին, իսկ ծրագրի շրջանակում կառուցվածքային բարեփոխումների անշեղ իրականացմամբ աճի ներուժը կարող է ավելի մեծանալ: Կանխատեսվում է, որ մինչև 2024 թ.-ի կեսը գնաճը կվերադառնա ՀՀ կենտրոնական բանկի 4 տոկոս թիրախին և կկայունանա դրա շուրջը: Ընթացիկ հաշիվն ակնկալվում է, որ 2023 թ. և 2024 թ. կհասնի ՀՆԱ-ի 3 տոկոսին՝ պայմանավորված սպառման և ներդրումների պահանջարկի բարձր ցուցանիշներով: Օտարերկրյա ուղղակի ներդրումները և կապիտալի ներհոսքերը թուլացել են: Հարկաբյուջետային գերակատարումը պահպանվել է, ընդ որում՝ հարկաբյուջետային ընդհանուր հաշվեկշիռը մինչև 2023 թ. սեպտեմբերը հավելուրդային էր՝ շնորհիվ սպասվածից բարձր եկամուտների հավաքման և ծախսերի թերակատարման, չնայած նրան, որ իշխանություններն արագ հարկաբյուջետային օժանդակությամբ արձագանքեցին Լեռնային Ղարաբաղի փախստականների հրատապ կարիքներին:

Գործադիր խորհուրդն այսօր եզրափակեց նաև Հայաստանի հետ IV հոդվածի շրջանակում 2023 թ. խորհրդակցությունը[1]: Համապատասխան մամուլի հաղորդագրությունն առանձին կթողարկվի:

Գործադիր խորհրդի կողմից այսօրվա քննարկմանը հաջորդեց կառավարիչ տնօրենի տեղակալ և նախագահողի պաշտոնակատար պրն. Բո Լիի հետևյալ հայտարարությունը.

«Հայաստանի տնտեսությանը հաջողվել է հաղթահարել վերջին տնտեսական ցնցումները, և հեռանկարը բարենպաստ է, այն է՝ բարձր տնտեսական աճ չափավոր գնաճի պայմաններում: Ծրագրի կատարողականն ընդհանուր առմամբ բավարար է մնում: Սակայն ներքին և արտաքին անորոշ միջավայրը քաղաքականության շարունակական շրջահայացություն և բարեփոխման անսասան ջանք են պահանջում:

Ողջունելի է 2024 թ. բյուջեում քաղաքականությամբ մակրոտնտեսական կայունության պահպանման և ԼՂ փախստականներին մարդասիրական և զարգացման օժանդակության տրամադրման շեշտադրումը: Միջնաժամկետ հատվածում բյուջեի պակասուրդի աստիճանական նվազումը՝ խարսխված Հայաստանի հարկաբյուջետային կանոններով, կապահովի պարտքի պահպանումը չափավոր մակարդակում: Հարկաբյուջետային կառուցվածքային բարեփոխումների, այդ թվում՝ հարկային ծախսերի օպտիմալացման և պետական մասնակցությամբ ձեռնարկությունների վերաբերյալ քաղաքականության ուղղությամբ առաջընթացը կօգնեն հարկաբյուջետային ռիսկերի զսպմանը և եկամուտների մոբիլիզացմանը՝

առողջապահության, սոցիալական պաշտպանության և կապիտալ ծրագրերի առաջնահերթ ծախսերին օժանդակելու համար։

Դրամավարկային քաղաքականության ուղղվածությունը պատշաճ էր և օգնել է գնաճի մեղմմանը։ Անհրաժեշտ է, որ ՀՀ ԿԲ-ը նախաձեռնող մնա, եթե բարձր պահանջարկի պայմանները գնաճի հեռանկարի համար ռիսկեր առաջացնեն։ Գների կայունության ռիսկերի վրա հիմնված մոտեցմանն անցնելու ՀՀ ԿԲ ծրագիրը պետք է ապահովի գնաճի նպատակադրման շրջանակի վստահելիության պահպանումը։ Ճկուն փոխարժեքը Հայաստանին լավ է ծառայել արտաքին ցնցումները կլանելու հարցում՝ միաժամանակ պահուստային բուֆերներ ստեղծելով։

Հաշվի առնելով ֆինանսական հատվածի ռիսկերը, մասնավորապես բնակարանային հատվածում, անհրաժեշտ է, որ ՀՀ ԿԲ-ը շարունակի առաջ մղել իր նորմատիվային կարգավորման ու վերահսկողական բարեփոխումները։ Ջանքերի առանցքում անհրաժեշտ է, որ լինի կապիտալի բուֆերների պահպանումը, վերահսկողական լիազորությունների և կարողությունների կատարելագործումը և ճգնաժամային կառավարման ուժեղացումը։

Կառուցվածքային բարեփոխումների առաջ մղումը կսատարի կայուն և ներառական աճին։ Աշխատուժի մասնակցությունը մեծացնելու և կառուցվածքային գործազրկությունը նվազեցնելու, ֆինանսների մատչելիությունը դյուրացնելու, արտահանումը բազմազանեցնելու և կառավարումն ուժեղացնելու իշխանությունների ջանքերը կբարձրացնեն տնտեսության դիմադրողականությունը և աճի ներուժը»։

Աղյուսակ 1. Հայաստան. ընտրված տնտեսական և ֆինանսական ցուցանիշներ, 2020–25 թթ.

	2020	2021	2022	2023	2024	2025
	Փաստ.	Փաստ.	Նախն.		Կանխ.	
Ազգային եկամուտներ և գներ.						

Իրական ՀՆԱ (տոկոսային փոփոխություն)	-7.2	5.7	12.6	7.0	5.0	4.5
Վերջնական սպառման ծախսեր, նպաստ. աճին	-10.5	4.0	6.6	7.5	2.2	2.6
Համախառն հիմնական կապիտալի կուտակում, նպաստ. աճին	-0.2	1.1	1.7	2.2	2.9	2.0
Նյութական շրջանառու միջոցների փոփոխություն, նպաստ. աճին	0.1	0.7	-0.9	-1.0	0.0	0.0
Ապրանքների և ծառայությունների զուտ արտահանում, նպաստ. աճին	3.4	-0.2	5.2	-1.6	-0.1	-0.1
Համախառն ներքին արդյունք (միլիարդ դրամ)	6,182	6,983	8,501	9,424	10,325	11,211
Համախառն ներքին արդյունք (միլիոն ԱՄՆ դոլար)	12,642	13,861	19,514	23,787	24,745	26,569
Համախառն ներքին արդյունք՝ մեկ շնչի հաշվով (ԱՄՆ դոլար)	4,269	4,679	6,587	8,029	8,352	8,967
ՍԳԻ (ժամանակահատվածի միջին, տոկոսային փոփոխություն)	1.2	7.2	8.6	2.7	3.9	4.0
ՍԳԻ (ժամանակահատվածի վերջ, տոկոսային փոփոխություն)	3.7	7.7	8.3	2.5	4.0	4.0
ՀՆԱ դեֆլյատոր (տոկոսային փոփոխություն)	1.8	6.9	8.1	3.6	4.3	3.9

Գործազրկության մակարդակ (տոկոսով)	18.2	15.5	13.0	13.5	14.0	14.0
Ներդրումներ և խնայողություններ (ՀՆԱ-ում տոկոս)						
Ներդրումներ	19.7	20.7	21.7	23.3	24.0	23.8
Ազգային խնայողություններ	15.7	17.2	22.5	20.2	20.9	20.2
Փող և վարկ (ժամանակահատվածի վերջ)						
Փողի բազա (տոկոսային փոփոխություն)	18.3	17.1	5.0	1.3	4.0	6.0
Փողի զանգված (տոկոսային փոփոխություն)	9.0	13.1	16.1	15.9	10.3	7.2
Մասնավոր հատվածի վարկավորման աճ (տոկոսային փոփոխություն)	14.3	-3.9	4.5	13.2	7.5	5.9
Կենտրոնական կառավարության գործառնություններ (ՀՆԱ-ում տոկոս)						
Եկամուտներ և դրամաշնորհներ	25.2	24.1	24.3	25.2	25.1	25.2
Որից ՝հարկային եկամուտներ	22.0	22.1	21.9	22.9	23.1	23.3
Ծախսեր	30.6	28.7	26.4	28.2	29.7	29.0
Ընդհանուր հաշվեկշիռը՝ դրամարկղային հիմունքով	-5.4	-4.6	-2.1	-2.9	-4.6	-3.8

Պետական և պետության կողմից երաշխավորված (ՊՊԵ) պարտք						
(ՀՆԱ-ում տոկոս)	67.4	63.4	49.2	50.3	50.1	50.8
Կենտրոնական կառավարության ՊՊԵ պարտք (տոկոսով)	63.5	60.3	46.7	47.5	47.5	48.4
Կենտրոնական կառավարության ՊՊԵ պարտքի արտարժութային մասնաբաժինը						
(տոկոսով)	75.6	71.2	62.1	58.2	55.8	51.7
Արտաքին հատված						
Ապրանքների և ծառայությունների արտահանում (միլիոն ԱՄՆ դոլար)	3,818	5,012	10,038	12,313	12,269	12,913
Ապրանքների և ծառայությունների ներմուծում (միլիոն ԱՄՆ դոլար)	-5,082	-6,120	-10,186	-13,043	-13,192	-13,990
Ապրանքների և ծառայությունների արտահանում (տոկոսային փոփոխ.)	-34.1	31.3	100.3	22.7	-0.4	5.2
Ապրանքների և ծառայությունների ներմուծում (տոկոսային փոփոխ.)	-33.2	20.4	66.5	28.0	1.1	6.0
Ընթացիկ հաշվի հաշվեկշիռ (ՀՆԱ-ում տոկոս)	-4.0	-3.5	0.8	-3.1	-3.1	-3.6
ՕՈՒՆ (զուտ, միլիոն ԱՄՆ դոլար)	86	342	948	437	461	530

Համախառն միջազգային պահուստներ (միլիոն ԱՄՆ դոլար)	2,616	3,230	4,112	4,004	3,903	4,006
Ներմուծման ծածկույթ 1/	5.1	3.8	3.8	3.6	3.3	3.2
Ժամանակահատվածի վերջի փոխարժեք (դրամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց)	523	480	394	…	…	…
Միջին փոխարժեք (դրամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց)	489	504	436	…	…	…

Աղբյուրները՝ ՀՀ իշխանություններ, Հիմնադրամի աշխատակազմի գնահատականներ և կանխատեսումներ

1/ Համախառն միջազգային պահուստները՝ ըստ ապրանքների և ծառայությունների ներմուծման հաջորդ տարվա ամիսների, այդ թվում՝ պահվող ՓՀԻ։

---

[1] ԱՄՀ-ի Համաձայնագրի հոդվածների IV հոդվածի համաձայն ԱՄՀ-ն իր անդամների հետ երկկողմ քննարկումներ է անցկացնում, սովորաբար ամեն տարի։ Աշխատակազմի թիմն այցելում է երկիր, հավաքում տնտեսական և ֆինանսական տեղեկություններ և պաշտոնատար անձանց հետ քննարկում երկրի տնտեսական զարգացումները և քաղաքականությունը։ Վերադառնալով կենտրոնական՝ աշխատակազմը պատրաստում է զեկույց, որն էլ Գործադիր խորհրդի կողմից քննարկման համար որպես հիմք է ծառայում ։